Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024 թվականի մայիսի 13-ից 16-ը
Հունգարիա (ք. Բուդապեշտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Էրիկ Սարգսյան, ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության նախագծերի իրականացման բաժնի մասնագետ՝ այլ քաղաքացիական աշխատանքների

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունգարիա, ք. Բուդապեշտ, մայիսի 13-ից 16-ը

3. Հրավիրող կողմը՝

Հունգարիայի ազգային հարկային և մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Կազմակերպվել է «Արհեստական բանականությունն և թվայնացումը հարկային և մաքսային մարմինների և նրանց հաճախորդների սպասարկման ոլորտում» խորագրով միջազգային համաժողով, որը նվիրված է արհեստական բանականության (AI) ինտեգրմանը հարկային և մաքսային ոլորտներում: Համաժողովի ընթացքում քննարկվել են հարկ վճարողների կողմից կատարվող բոլոր հնարավոր գործարքների թվայնացման տարբերակները, մասնակից պետությունների պատվիրակները ներկայացրել են իրենց երկրում հարկային և մաքսային ոլորտում կիրառվող արհեստական բանականության մեթոդները:

5. Քննարկված թեմաները՝

ԱԱՀ-ն թվային դաշտում, նորարարություններ լեզվի մոդելավորման ոլորտում (LLM), վերջին 20 տարիների ընթացքում Եվրոմիության հարկային և մաքսային ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների թվայնացում, «Bacuda» նախագծի ներկայացում, վիրտուալ իրականության (VR) գործիքակազմի օգտագործում մաքսային հսկողության ոլորտում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Մասնակցել են Ալբանիայի, Բուլղարիայի, Կանադայի, Չինաստանի, Խորվատիայի, Չեխիայի, Դանիայի, Էստոնիայի, Հունաստանի, Իռլանդիայի,Կիպրոսի, Ավստրիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Մակեդոնիայի, Սլովակիայի, Իսպանիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Թուրքիայի, Ադրբեջանի, Ուկրաինայի պատվիրակները:

Քննարկվել են արհեստական բանականության և թվայնացման մեթոդների ներդրման տարբերակներ և հնարավորություններ հարկային և մաքսային մարմինների և նրանց հաճախորդների սպասարկման ոլորտում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն նմանատիպ աշխատանքային քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտության վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Երկրների պատվիրակների միջև համաժողովի ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության և փորձի փոխանակման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Էրիկ Սարգսյան

2024-05-21 18:03:03 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

21.05.2024թ.